

### 5.3. Համերգային գործունեությունը 2000թ.

2000թ. հանրապետությունում գործել են ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության համակարգի 18 և համայնքային ենթակայության 2 համերգային կազմակերպություններ՝ նույնքան որքան 1999թ.:

2000թ. հանրապետությունում կազմակերպվել է 410 համերգ կամ 155-ով պակաս, քան 1999թ.: Կոլեկտիվների ուժերով կազմակերպվել է 362, իսկ այլ կոլեկտիվների հետ համատեղ, պայմանագրային հիմունքներով՝ 48 համերգ: Հանրապետությունում կայացած համերգներից 8-ը կամ 2%-ը կազմակերպվել են գյուղական վայրերում, 96-ը կամ 23.4%-ը՝ ֆիլիհարմոնիկ, իսկ 2-ը կամ 0.5%-ը՝ երեխաների համար նախատեսված ֆիլիհարմոնիկ և էստրադային համերգներն են:

2000թ. արտասահմանում կազմակերպված 27 համերգ-հյուրախաղերից 14-ը իրակա-նացվել են Պարսկաստանում, 8-ը՝ Իրաքում, 3-ը՝ Արաբական Եմիրություններում և 2-ը՝ ԱՄՆ-ում:

2000թ. կազմակերպվել են 210 բարեգործական համերգ, որոնք կայացել են զորամասե-րում ու հրապարակներում և կրել են տոնական բնույթ: Այդ համերգներին ներկա հանդիսատեսների թվաքանակը չի հաշվառվել, սակայն կազմակերպիչների գնահատմամբ այն կազմել է մոտ 100 հազար մարդ:

Համերգային դահլիճներում կազմակերպված համերգներին ներկա են եղել 139.9 հազ. հանդիսատես: Նրանց 1.1%-ը կամ 1.6 հազար մարդ հաճախել են գյուղական վայրերում կազմակերպված համերգներին, 21.5%-ը կամ 30.1 հազարը՝ ֆիլիհարմոնիկ համերգներին: 18.9%-ը կամ 26.4 հազարը արտերկրներում կազմակերպված համերգ-հյուրախաղերի հանդիսատեսների թվաքանակն է: Հանրապետության 1000 բնակչի հաշվով հաճախումները կազմել են 37, 1999թ. 133-ի դիմաց:

Համերգներից ստացված հասույթը կազմել է 26.7 մլն. դրամ (1999թ.՝ 35.1 մլն. դրամ), որի 1.2%-ը կամ 0.3 մլն. դրամը ստացվել է գյուղական վայրերում կազմակերպված համերգներից, 11.6%-ը կամ 3.1 մլն. դրամը՝ ֆիլիհարմոնիկ, 0.3%-ը կամ 0.08 մլն. դրամը՝ երեխաների համար կազմակերպված ֆիլիհարմոնիկ և էստրադային համերգները: Միջին հաշվով մեկ համերգի մուտքի վճարումներից հասույթը կազմել է 65.1 հազ. դրամ, ընդ որում գյուղական վայրերում այդ ցուցանիշը կազմել է 40.0 հազ. դրամ:

Համերգային կազմակերպությունների 2000թ. ընդհանուր ֆինանսական միջոցները կազմել են 191.3 մլն. դրամ, որի 60.5%-ը կամ 115.8 մլն. դրամը՝ պետական բյուջեից, 11.6 %-ը կամ 22.2 մլն դրամը՝ անհատույց տրված միջոցներն են (հովանավորչություն, շնորհ և այլն), 27.8%-ը կամ 53.3 մլն. դրամը՝ բնակչությանը նատուցված վճարովի ծառայություններից ստացված դրամական միջոցներն են:

Համերգային կազմակերպությունների 2000թ. տարեկան ընդհանուր ծախսերը կազմել են 232.1 մլն. դրամ: Նյութական ծախսերը (ներառյալ դրանց հավասարեցված ծախսերը) կազմել են ընդհանուր ծախսերի 50.4%-ը կամ 116.9 մլն. դրամ, 49.5%-ը (114.8 մլն. դրամ) աշխատավարձի ֆոնդն է: Կապիտալ ներդրումները, հիմնավերանորոգման, գույքի և սարքավորումների ձեռք բերման ծախսերը կազմել են 0.4 մլն դրամ կամ ընդհանուր ծախսերի 0.2%-ը: Մեկ համերգի հաշվով ֆինանսական ծախսումները 2000թ. կազմել են 566.1 հազ.դրամ:

**Համերգային կազմակերպությունների գործունեությունն ըստ մարզերի**

	Համերգային կազմակերպությունների քանակը	Համերգների քանակը	Հանդիսատեսների թվաքանակը, հազ. մարդ	Ստացված հասույթը, հազ. դրամ	Հաճախողների թվաքանակը մեկ ներկայացման հաշվով, մարդ
Երևան	16	386	133.8	25535	346
Շիրակ	3	24	6.1	1175	254
Լոռի	1	0	0	0	0

**Համերգային կազմակերպությունների գործունեությունը**

	Քանակը	Համերգների քանակը	Հանդիսատեսների թվաքանակը, հազ. մարդ	Ստացված հասույթը, հազ. դրամ	Հաճախողների թվաքանակը մեկ ներկայացման հաշվով, մարդ
1996	16	487	149.4	33256.0	307
1997	20	510	870.7	42601.7	1707
1998	21	579	952.6	47650.1	1645
1999	20	565	505.9	35089.6	895
2000	20	410	139.9	26710.0	341